ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ-ն ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-26/50 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
8	Համակարգչ	Համակարգչ	Համակարգչ	Համակարգչ	"Առաջարկվող համակարգիչը պետք է լինի աշխատասեղանային (Desktop PC), նախատեսված երկարատև և ինտենսիվ շահագործման համար: Համակարգչի իրանը պետք է լինի Mid Tower տիպի, մետաղական կառուցվածքով, ապահովի արդյունավետ օդափոխություն և համատեղելի լինի micro-ATX և ATX չափի մայրական սալիկների հետ: Իրանն անհրաժեշտ է ունենա առջևի վահանակում USB պորտեր և աուդիո մուտք/ելք, ինչպես նաև ներքին տարածք լրացուցիչ

					հովացուցիչների տեղադրման համար։ Սնուցման բլոկը պետք է ապահովի ոչ պակաս, քան 700 Վտ հզորություն, համապատասխան լինի ATX ստանդարտին և ունենա էներգախնայողության մակարդակ՝ ոչ պակաս, քան 80+։ Սնուցման բլոկը պետք է ապահովված լինի գերլարման, գերծանրաբեռնվածության, կարճ միացման և գերտաքացման պաշտպանական մեխանիզմներով և համապատասխան լինի միջազգային անվտանգության ստանդարտներին։ Կենտրոնական պրոցեսորը պետք է լինի Intel Core i7-12700 մոդելին համարժեք կամ ավելի բարձր արտադրողականությամբ, ունենա ոչ պակաս, քան 12 միջուկ և 20 թել, հիմնական աշխատանքային հաճախականությունը՝ ոչ պակաս, քան 2.1 GHz, իսկ Turbo ռեժիմում՝ ոչ պակաս, քան 4.9 GHz։ Պրոցեսորը պետք է աջակցի ժամանակակից վիրտուալիզացիոն և էներգախնայող տեխնոլոգիաներին և ապահովի բարձր արտադրողականություն

						բազմաբնույթ հաշվարկային առաջադրանքների ժամանակ։ Մայրական սալիկը պետք է լինի micro-ATX ձևաչափի, համատեղելի նշված պրոցեսորի սոկետի հետ և հիմնված լինի Intel B760 կամ համարժեք չիպսեթի վրա։ Այն պետք է աջակցի DDR4 օպերատիվ հիշողությանը, ունենա առնվազն երկու RAM սլոթ՝ հետագա ընդլայնման հնարավորությամբ, ինչպես նաև ապահովի NVMe M.2 և SATA III միացումների աջակցություն։ Մայրական սալիկը պետք է ունենա Gigabit Ethernet ցանցային ինտերֆեյս և բավարար քանակությամբ USB պորտեր՝ ներառյալ USB 3.2 ստանդարտը։ Պրոցեսորի հովացման համակարգը պետք է լինի օդային տիպի, լիովին համատեղելի պրոցեսորի ջերմային հզորության հետ և ապահովի արդյունավետ ջերմափոխանցում երկարատև ծանրաբեռնված աշխատանքի պայմաններում՝ միաժամանակ պահպանելով ցածր աղմուկի մակարդակ։ Օպերատիվ հիշողությունը պետք է լինի DDR4 տիպի, ընդհանուր ծավալը՝ ոչ

					պակաս, քան 16 ԳԲ, աշխատանքային հաճախականությունը՝ ոչ պակաս, քան 3200 MHz։ Հիշողությունը պետք է լիովին համատեղելի լինի մայրական սալիկի և պրոցեսորի հետ և ապահովի կայուն աշխատանք։ Տվյալների պահպանման համար համակարգիչը պետք է համալրված լինի NVMe տեխնոլոգիայով SSD կրիչով՝ ոչ պակաս, քան 500 ԳԲ տարողությամբ, PCIe Gen3 x4 կամ ավելի բարձր ինտերֆեյսով, ապահովելով բարձր կարդալու և գրելու արագություններ և բարձր հուսալիություն։ , նախատեսված շարունակական 24/7 շահագործման համար և բարձր աշխատանքային ռեսուրսով։ Համակարգիչը պետք է մատակարարվի լիովին հավաքված, փորձարկված և աշխատանքային վիճակում։ Բոլոր բաղադրիչները պետք է լինեն նոր, չօգտագործված, փոխադարձաբար համատեղելի և 12 ամիս երաշխիքով։ "

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО КОМПГАРАНТ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-26/50 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
8					